ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

**«ԳԳԱԿ-ԳՀԱՊՁԲ-26/3/Օ»** ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի

| | |
|---|---|
| Պատվիրատու | «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ |
| Պատվիրատուի հասցեն | ՀՀ. ք.Երևան, Զաքիյան 10 |
| Ընթացակարգի ծածկագիրը | «ԳԳԱԿ-ԳՀԱՊՁԲ-26/3/Օ» |
| Գնման առարկայի անվանումը | **Ջեռուցման, հովացման և օդափոխության համակարգի պահեստամասեր** |
| Նիստի անցկացման վայրը | «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ ՀՀ.ք.Երևան, Զաքիյան 10 |
| Հայտերի բացման և գնահատման նիստի անցկացման օրը և ժամը | 17.06.2026թ ժ 11.00 -19.06.2026 |
| Նիստին ներկա հանձնաժողովի կազմ | **Գնահատող հանձնաժողովի նախագահ** |
| | Լևոն Զաքարյան ՝ Վարչական աշխատանքների գծով Գլխավոր տնօրենի տեղակալ |
| | **Գնահատող հանձնաժողովի անդամներ** |
| | - Հովհաննես Պողոսյան՝ Շենքերի սպասարկման բաժնի պետ |
| | - Բեգլար Գասպարյան՝ Շենքերի սպասարկման բաժնի պետի տեղակալ |
| | - Անի Հարությունյան՝ Շենքերի սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ գնումների համակարգող | Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության պետի տեղակալ Արմինե Միրումյան |

1. Գնման ընթացակարգի ընտրության հիմնավորումը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին կետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 23-րդ կետի 2-րդ ենթակետը

2. Հրավեր ուղարկելու կամ հրապարակելու ամսաթիվը՝ հրավերը 2026թ. հունիսի 10-ին հրապարակվել է ՀՀ Ֆինանսների նախարարության Պետական գնումների պաշտոնական ինտերնետային կայքում

3. Հրավերում կատարված փոփոխությունները՝ Հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

4. Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին չի ներկայացվել որևէ հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ:

5. Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում սահմանված կարգով ընթացակարգի հայտ են ներկայացրել 2/ երկու/ մասնակից: Հայտերը ներկայացվել են թղթային տարբերակով, բացվել են «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ում, ք.Երևան, Զաքիյան 10 հասցեով, 2026թ հունիսի 17-ին, ժամը 11. 00 ին

6.Տվյալներ հայտ ներկայացրած մասնակիցների մասին

| N | Անվանում | Հասցե, հեռ. | Էլ.-փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | «ԱՄՕՊՐՈՖ» ՍՊԸ | ք.Երևան,Առնո Բաբաջանյան 28 շն., 26բն. Հեռ. 077959162 | amoprof@mail.ru | 01294321 |
| 2 | **«ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ** | Ք.Երևան, Դեմիրճյան 36 բն 8 | Rvprojects7@gmail.com | 02671392 |

**Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:**

7. Հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին

**7.1 «ԱՄՕՊՐՈՖ» ՍՊԸ** կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

**7.2 «ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ** կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

**Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:**

8. Տվյալներ բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության մասին

**8.1 «ԱՄՕՊՐՈՖ» ՍՊԸ** կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող Հավելված 1 և Հավելված 1.1 առկա են, իսկ Հավելված 2-ի՝ գնային առաջարկի, բնօրինակը ներկայացված է կիսատ, միայն առաջին էջն է առկա: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 1 օրինակ պատճենից:

**8.2 «ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ** կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերն առկա են: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 1 օրինակ պատճենից:

**Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:**

9 Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի / ներառյալ մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի / հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

**9.1 «ԱՄՕՊՐՈՖ» ՍՊԸ** կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում է հրավերի պահանջներին: Մասնավորապես գնային առաջարկի բնօրինակը ներկայացված է կիսատ, 2 էջից միայն առաջին էջն է առկա , չկա նշած մասնակցի անվանումը, տնօրենի անուն ազգանուն, հաստատված չի ստորագրությամբ և կնիքով :

**9.2 «ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ** կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում է հրավերի պահանջներին սակայն Հավելված 1-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայք էջի հղումը նախորդ տարվա հայտարարագրինն է: Անհրաժեշտ է ներկայացնել նոր հայտարարագրի կայք էջի հղումը:

**Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:**

10 Տվյալներ մասնակիցների առաջարկած գների վերաբերյալ

**«ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ** կողմից 1-ին չափաբաժնի համար ներկայացվել է գնային առաջարկ 5 297 777

**Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:**

**Հաշվի առնելով, որ մասնակիցների հայտերում առկա են անհամապատասխանություններ և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց**

ՈՐՈՇՈՒՄ 2

Հանձնաժողովը որոշեց կասեցնել հայտերի գնահատման նիստը և առաջարկել «ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում ուղղել անհամապատասխանությունը.

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել 2026 թվականի հունիսի 19-ին :

**Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:**

**Ընդունել ի գիտություն, որ նիստը կասեցված նիստը վերսկսվել է 19.06.2026թ**

Հայտնաբերված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկվել են «ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ կողմից:

11 Տվյալներ մասնակիցների կողմից շտկված փաստաթղթերի /ներառյալ մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի / հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

**11.1** ***«ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ*** կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց

## ՈՐՈՇՈՒՄ 3

1. **ԱՄՕՊՐՈՖ ՍՊԸ** հայտը մերժել քանի որ գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին:
2. **«ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ հայտը գնահատել հրավերի պահանջներին բավարարող**
3. **2-14-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարել չկայացած ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ի կետի համաձայն**
4. **1-ին չափաբաժնում ընտրված մասնակից ճանաչել «ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ-ին :**
5. «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Ջեռուցման, հովացման և օդափոխության համակարգի պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳԳԱԿ-ԳՀԱՊՁԲ-26/3/Օ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագրեր
6. Հաստատել պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:
7. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետը սահմանել 10 օրացուցային օր:
8. Պայմանագիր կնքելու նպատակով անգործության ժամկետի ավարտից հետո 4-րդ աշխատանքային օրը ընտրված մասնակցին ծանուցել՝ ներկայացնելով պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում գնման գնի 10/տասը/ տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 15/ տասնհինգ/ տոկոսի չափով:

**Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:**

Գնահատող հանձնաժողովի քարտուղարին

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

*կազմակերպման» կարգի 43-րդ կետով*

*1) Հայտերի գրանցման գրանցամատյանի, գնահատման նիստի արձանագրության և շահերի բախման բացակայության մասին հայտարարության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակել տեղեկագրում.*

*2) Ընտրված մասնակցի կողմից ներկայացված ընթացակարգին մասնակցելու Դիմում-հայտարարության և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում:*

*3) «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Ջեռուցման, հովացման և օդափոխության համակարգի պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳԳԱԿ-ԳՀԱՊՁԲ-26/3/Օ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության Պետական գնումների պաշտոնական ինտերնետային կայքում:*

*4. Պայմանագիր կնքելու նպատակով անգործության ժամկետի ավարտից հետո 4-րդ աշխատանքային օրը ընտրված մասնակիցներին ծանուցել՝ ներկայացնելով պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում գնման գնի 10/տասը/ տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 15/ տասնհինգ/ տոկոսի չափով:*

***Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.***

***Գնահատող հանձնաժողովի նախագահ***

*-Լևոն Զաքարյան ՝ Վարչական աշխատանքների գծով Գլխավոր տնօրենի տեղակալ*

***Գնահատող հանձնաժողովի անդամներ***

*- Հովհաննես Պողոսյան՝ Շենքերի սպասարկման բաժնի պետ*

*- Բեգլար Գասպարյան՝ Շենքերի սպասարկման բաժնի պետի տեղակալ*

*- Անի Հարությունյան՝ Շենքերի սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ*

***Գնահատող հանձնաժողովի քարտուղար***

*- Արմինե Միրումյան՝ Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության պետի տեղակալ*